



ԵՐԿՈՒԾԱԲԹԻ, 9 ՓԵՏՐՈՒՐ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ լիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Մեծ ու զարմանալի էն Քո գործերը, Ամենակալ Տէր Աստուած մեր,
Արդար ու ճշմարիտ էն ճամբաներդ, Ամենակալ Տէր Աստուած մեր:
Տէր, ո՛վ չի վախենում Քեզնից, Ո՛վ է, որ չի փառաւորում Քեզ,
Քանի որ Դու ես միայն սուրբ, (2) Միայն սուրբ: (3)
Բոլոր ազգերը պիտի գան Քո առջեւ ու Քեզ պիտի երկրպագեն,
Քանի որ իրաւունքներդ յայտնուեցին Բոլոր ազգերին, Ո՛վ Թագաւոր:

ԱՊՈԹՔ

Տէ՛ր Աստուած մեր, բաց մեր շրթները, որպէսզի Քեզի նոր երգ երգենք, որովհետեւ Դուն սփռեցի բաներ ըրիւր, Քու աջովդ մեզի փրկութիւն պարգեւեցիր: Լեցո՛ւ մեզ ուրախութեամբդ, որպէսզի մեր սրտերը ցնծան Քու ներկայութեամբդ, եւ մեր կեանքը վկայ ըլլայ Քու արդարութեանդ ու ճշմարտութեանդ: Օրհնէ՛ մեզ, որպէսզի ամբողջ աշխարհին հոչակենք Քու սէրդ ու փրկութիւնդ, եւ բոլոր ազգերը տեսնեն Քու փառք եւ ողորմութիւնդ: Տո՛ւր մեզի խոնարհ սիրտ, որ Քեզ պաշտենք ուրախութեամբ ու շնորհակալութեամբ: Քեզի փառք, Տէ՛ր, որ արդարութեամբ կը թագաւորես եւ Քու սիրովդ կը դատես աշխարհը, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար փառն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գէտ աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղեղոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պաշտպան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նսրիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ք արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՍԱՂՄՈՍ 98

ԱՍՏՈՒԱԾ ԹԱԳԱԻՈՐԵԼՈՒ ԿՈՒ ԳԱՅ

Մոր երգ երգեցէք Տիրոջ, որովհետեւ սքանչելի բաներ ըրաւ.
յաղթանակեց իր զօրութեամբ, իր սուրբ բազուկով:
Տէրը ցոյց փուլաւ իր փարած յաղթանակը,
բոլոր ազգերուն յայտնեց իր արդարութիւնը:
Չմոռցաւ բնաւ իր ժողովուրդին հանդէպ
իր փածած սէրն ու հաւաքարմութիւնը,
եւ ամբողջ աշխարհը փեսաւ թէ ինչպէս մեր Աստուածը փրկեց մեզ:
Ուրախութեամբ աղաղակեցէք Տիրոջ դիմաց, ով աշխարհ,
ուրախաձայն գոչեցէք, ցնծացէք եւ ներքող երգեցէք:
Ներքող երգեցէք Տիրոջ՝ քնարներու ընկերակցութեամբ,
քնարներու քաղցրաձայն նուագակցութեամբ:
Շեփորներ ու եղջերափող հնչեցնելով՝
ուրախութեամբ աղաղակեցէք Թագաւորին՝ Տիրոջ դիմաց:
Թող հրճուանքով աղաղակեն - ծովը՝ իր լման բովանդակութեամբ,
աշխարհը՝ իր բոլոր բնակիչներով:
Գետերը թող ծափ զարնեն, եւ անոնց հետ՝ լեռները թող
ցնծութեամբ երգեն Տիրոջ առջեւ, որ ահա կու գայ աշխարհը
դաբելու:
Անիկա արդարութեամբ պիտի կառավարէ աշխարհը,
ուղղամտութեամբ պիտի կառավարէ ժողովուրդները:

ԱՍՏՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐԵԼՈՒ ԿՈՒ ԳԱՅ

Աստուծոյ օրհնութեամբ եւ օգնականութեամբ, ու իմաստութեամբ այսօր պիտի սերտենք 98-րդ Սաղմոսը: Նախ մէկ բան որոշ է ու պէտք է ըլլայ, որ Սաղմոսները ունին իրենց ժամանակահատուածը, այսինքն՝ գրուած են որոշ ժամանակի մէջ: Անոր համար ալ նախ պէտք է նայինք Կուռալ Սաղմոսը այդ ժամանակահատուածին մէջ, որմէ ետք քննելու թէ արդեօք այսօր ինչ պարզամ ունի մեզի փոխանցելիք: Այսօրուան Սաղմոսն ալ թագաւորական Սաղմոս է: Հերաքրքրական վերնագրով, Աստուած թագաւորելու կու գայ: Ինչպէս միւս Սաղմոսներու պարագային, այս ալ կը սկսի կոչով մը՝ “Նոր երգ երգեցէք Տիրոջ”: Ի՞նչ է երգին բովանդակութիւնը: Յաղթանակի երգ: Ինչո՞ւ նոր երգ երգենք, որովհետեւ Ան սքանչելի բաներ ըրաւ: Ի՞նչ են այդ սքանչելի բաները: Իր գործութեամբ եւ Իր սուրբ բազուկովը յաղթանակեց: Ո՞ր յաղթանակի մասին է խօսքը: Նախ այն յաղթանակին որ ցոյց փուլ Եգիպտոսի մէջ: Անոր համար ալ 95-րդ Սաղմոսը, եթէ կը յիշենք, այդ մասին պարմեց, որ Աստուած է որ կը թագաւորէ բոլոր աստուածներուն վրայ, ու մանաւանդ՝ յիշեցուց որ իրենց նախահայրերուն պէս յիմառութիւն չընեն, Տէրը փորձելով: Այդ յաղթանակը ցոյց փուլաւ եւ անով նաեւ բոլոր ժողովուրդներուն յայտնեց Իր արդարութիւնը: Աստուած նաեւ չմոռցաւ Իր սերն ու հաւարարմութիւնը հանդէպ Իսրայէլի ժողովուրդին, այն ինչ խոստացած էր Աբրահամի օրերէն, այդ մէկը պիտի յիշեցնէր Մովսէսին: Եւ ահա երբ հասաւ ժամանակը, Աստուած փրկեց Իր ժողովուրդը: Ահա այդ յաղթանակին իբրեւ արարայարութիւն, կոչ կ’ընէ Սաղմոսներգուն, որ ուրախութեամբ աղաղակենք եւ ներքող երգենք նուագարաններու ընկերակցութեամբ, եւ ոչ միայն մարդիկ, այլ նաեւ ամբողջ ստեղծագործութիւնը՝ ծովը՝ իր բովանդակութեամբ, աշխարհը իր բնակիչներով, գետերը, լեռները, իրենց ամբողջ լիութեամբ, որովհետեւ ահա Տէրը կու գայ աշխարհը դարելու: Ուրեմն, անցեալին եղածը ուրիշ բան չէր եթէ ոչ շուքը, նախաճաշակը գալիք այն իրականութեան որ իր լրումը պիտի գտնէ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալուստովը: Այնպէս ինչպէս Քրիստոս պիտի ըսէր Իր աշակերտներուն, Մարթէոս 24, ահա Մարդու Որդին պիտի գայ ամպերու վրայ բազմած Իր փառքով դարելու աշխարհը: Ինչո՞ւ ակնարկութիւն կայ, ծովուն, գետերուն, լեռներուն, որովհետեւ անոնք ալ կը սպասենք իրենց ազապագրումին, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. “Ամբողջ ստեղծագործութիւնը երկունքի մէջ է, կը սպասէ ազապագրումի” Հռոմայեցիս 8:22: Ուրեմն, այդ Նոր երգը յաղթանակի, նոր ստեղծագործութեան երգն է, այնպէս ինչպէս Յայտնութիւն 5:9-10, կը կարդանք: Ուրեմն Տէրը կու գայ թագաւորելու Իր փառքով, բայց այդ գալուստը նաեւ կ’ենթադրէ դարաստան, բայց արդար դարաստան: Ուրեմն կարիքը չկայ վախնալու այդ Դարաստանէն, այլ ընդհակակը՝ ուրախութեամբ դիմաւորելու, որովհետեւ ալ վերջ պիտի գտնեն բոլոր տեսակի աւերները, անարդարութիւնը, մահը, բռնութիւնը, եւ այն ինչ որ տեղի կ’ունենայ այսօր: Անոր համար ալ Յայտնութիւն Յովհաննոս գիրքը կ’աւարտի հետեւեալ պարզամով. “Այո, շուրջով կու գամ: Զինք սպասողները կ’ըսեն. “Ամէն: Եկուր, Տէր Յիսուս”: